

տարեղիրների համար: Նա անկեղծ պատմագիր է, ուր իւր տարբեր աղբիւրները չեն մխարանում՝ պարզ ասում է: Մեր պատմագրի համար մեծ նշանակութիւն ունի ստոյգ ժամանակագրութիւնը: «Այսուհետե կամիմ թվականաւն զամենայն բան, զի վարդաւնէ հետէ շիտթեալ տեսանեմք զիշխանութիւն հայաստանեայց . . . այլ մեք թվականաւն զկարգըն ցուցցուք»: Նա ընդունում է ժամանակը իրրե հիմք պատմական իրողութեանց, շեշտելով քաղաքական դէպքերի խառնակութեան վրայ: Նշանաւոր անձանց և դէպքերի մասին եղած գրաւոր և բերանացի աւանդութիւնները նոյնպէս նիւթ են առլիս մեր պատմագրին: Մեր հեղինակի ամենամեծ սխալը, ոչ միայն տարբեր աղբիւրի, այլ նաև նոյն աղբիւրի եկեղեցական և քաղաքական պատմութիւնը անջատելն է, որը և պատճառ է գառնում նոյն դէպքերի երկիցս և երրեմն երկիցս յիշատակութեան:

Կիլիկեցի.

ՕՐԹՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ.

Անցեալ փետրուար ամսին, մի շարաթուայ ընթացում, Օրթոդոքս եկեղեցին կորցրեց իւր բարձր հոգևորականութեան երկու առաջին կարգի ներկայացուցիչներին, փետր. 5-ին վախճանուեցաւ Բէլգրադի արքեպիսկոպոս և Սերբիոյ մտորոպոլիտ Միխայիլ, իսկ փետր. 13-ին Մոսկվայի մտորոպոլիտ Սերգիյ:

Սերբիական եկեղեցւոյ առաջին անկախ հովուապետ Միխայիլ մտորոպոլիտը ծնուած է 1826 թ. ին: Սկզբնական և միջնակարգ կրթութիւնը իւր հայրենիքում ստանալուց յետոյ նա 1847 թ. ին Կիեւ է եկել, ուր նախ կրկին հոգևոր դպրոց է մըտնել, ապա ձեմարան, և աւարտել է այստեղ 1853 թ. ին մագիստրոսի աստիճանով: Ռուսաստան գալուց յետոյ, ինչպէս ինքը սովորութիւն է ունեցել վերջերը յաճախ յիշել՝ նա արձանագրել է իւր յուշատետրի մէջ. «Մի մոռանար երբէք, և ոչ մի վայրկեան, թէ ինչի համար ևս հայրենիքդ թողել ու այստեղ եկել, Իմացած եղիր, որ նորա համար չես այստեղ, որպէս զի օգտուիս կեանքի զուարճութիւն-

ներից, այլ որպէս զի գիշեր ցերեկ աշխատես և ձեռք բերես որչափ կարելի է շատ գիտութիւն, որին այնչափ շատ պէտք ունի քո հայրենիքը . . . Աշխատիր, որ դու ևս մի ժամանակ որչափ իցէ օգտակար լինիս քո թանկագին և սիրելի ազգին»: Այդ սկզբունքին և հետեւել է նա իւր ամբողջ կեանքում:— Ուսումն աւարտելուց յետոյ նոյն 1853 թ. ին նա կուսակրօն քահանայութեան աստիճան է ստացել Կիեւում և յաջորդ տարին հայրենիք վերադառնալով Բէլգրադի հոգևոր դպրանոցի ուսուցչապետ կարգուել: Բայց երկար չէ մնացել այդ պաշտօնի մէջ, այլ մի քանի ամիս յետոյ վարդապետութեան աստիճան և եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելով՝ նշանակուել է Շարացի եպիսկոպոս, 1859 թ. ին նա միաձայն ընտրութեամբ Բէլգրադի մտորոպոլիտական աթոռն է բարձրացել, որի վերայ և մնացել է մինչև կեանքի վերջը, մի քանի տարիներ ընդմիջումով միայն (1881--1889): Միխայիլ մտորոպոլիտը Ռուսաստանի հաւատարիմ բարեկամն է եղել միշտ, մանաւանդ վերջին ուսուցչական պատերազմի ժամանակ կարևոր դեր է խաղացել՝ քրիստոնէից ազատութեան համար արշաւող ուսուցիչներին նպաստներ հասցնելով և քաջալերելով: ուստի և 1881 թ. ին երբ Սերբիայում իշխանութեան ղեկը աւտորիտետը կուսակցութեան ձեռքն էր և մտորոպոլիտը ընդդիմացաւ նորա, հոգևոր աստիճաններ ընդունողների վերայ գրած, ծանր հարկերի օրէնքը գործադրելուն՝ Միլան իշխանի հրովարտակով աթոռից զրկուեցաւ և 2 տարի առանձնական կեանք վարելուց յետոյ ստիպուած եղաւ մինչև իսկ հայրենիքից հեռանալ՝ ուխտ գնալ նախ ս. երկիր և ապա Ռուսաստանում բնակութիւն հաստատել: մինչև որ 1889 թ. ին, երբ Միլան հրաժարուեցաւ գահից ինպաստ իւր Աղէքսանդր որդու, Միխայիլ, սերբ ժողովուրդի պահանջմամբ, հրաւիրուեցաւ կրկին մտորոպոլիտական աթոռի վերայ բազմելու: նորա առաջին գործն եղաւ այդտեղ պատանի Աղէքսանդրին թագաւոր օծել, ինչպէս 1882 թ. ին նորա հօրը, Սերբիոյ առաջին թագաւորին էր օծել: նա ինքը, եռանդուն ջանքեր գործ գնելով՝ 1879 թ. ին իւրաթողը հանեց Տիեղ. պատրիարքի իշխանութիւնից և եղաւ Բէլգրադի առաջին անկախ մտորոպոլիտը: Անդադար աշխատելով իւր հօտի բարորութեան համար՝ առանձին ջանք է գործ դրել նա մանաւանդ հոգևորականութեան կրթական աստիճանը բարձրացնելու: ուստի բազմաթիւ երիտասարդներ է ուղարկել Ռուսաստանի, երրեմն և Յուսաստանի, հոգևոր ձեմարանները կամ համալսարանները՝ բարձր կրթութիւն ստանալու նպատակով և ամեն կերպ հոգ է տարել սեփական հոգևոր կրթութարանների բարեկարգութեան մասին: Ի միջի այլոց նա թողել է 50-ի շափ զանազան կարգի և բովանդակութեան գրուածներ, բացի լրագրական յո-

1. Տէս. 2և. 19 ր. Գեկի մահուան մասին հորեկացու և Փաւստոսի ասածը, և այլ սեղեր՝ սևորոյ տոմսիս—բառով:

դուածներէց և հովուական թղթերէց, Թէ որչափ հեղինակութիւն է վայելել հանգուցեալը ոչ միայն իւր ժողովուրդի կամ առհասարակ Օրթոդոքս եկեղեցւոյ մէջ, այլ նաև դուրսը, երևում է այն օրինակէց, որ նա նախագահ է ընտրուել 1862 թ.ին Փարիզում Աֆրիկայի ստրուկների ազատութեան համար կազմած ընկերութեան:—Նոր միտրոպոլիտ է ընտրուած և հաստատուած Նիշի եպիսկոպոս Ննուկենտիլ, որ նոյնպէս Ռուսաստանում է բարձր կրթութիւն ստացել և Միխայիլի մանրիմն է եղել ու գաղափարակիրը:

Սերգէյ միտրոպոլիտը ծնուած է 1820 թ.-ին և բարձր կրթութիւն ստացել էր Մոսկուայի հոգևոր ձեմարանում: ուր և աւարտելով 1840 թ.-ին, նոյն տարին կուսակրօն քահանայ էր ձեռնադրուել և մաղիստրոսի աստիճան ձեռք բերել: Այնուհետև նա ամբողջ քսան տարի ծառայել էր նոյն հոգևոր ձեմարանում՝ ուսուցչակաթի տեսչի օգնականի և տեսչի պաշտօններով: Իսկ 1850 թ.-ից Վեր վարդապետական աստիճան ընդունելով, միաժամանակ տեղական վանքերի կառավարիչ ևս եղել էր: 1860 թ.-ին նա Կուրսկի թեմի համար եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և հետզհետէ երկու եպիսկոպոսական, երկու արքեպիսկոպոսական թեմեր կառավարելուց յետոյ, 1893 թ.-ին ընտրուեցաւ Մոսկուայի միտրոպոլիտ, Հանգուցեալը յայտնի էր իր բն խիստ մարդ, իւր եկեղեցւոյ բոլոր կարգերի նախանձանդիր պաշտպան, հին ուղղութեան հետևող, և մերժող եւրոպական բոլոր նորմուծութիւնների աստուածաբանական գիտութեան մէջ՝ հակառակ այն ամէնի, ինչ որ գուրսէ օրթոդոքս եկեղեցւոյ շրջանակէց: Երբ նա միտրոպոլիտական ամոռ բարձրացաւ, Մոսկուայի աստրոնոմիայի (հին ձեւերի պաշտպան հերձուածողները) կամեցան նորա օրհնութիւնն առնել, բայց յանդիմանութեամբ մերժուեցան: նա վախճանուեցաւ Պետերբուրգում, ուր դնացել էր ս. սինոդի նիստերին մասնակցելու համար: Իսկ մարմինը Մոսկուա տարուեցաւ և փետր. 16-ին թաղուեցաւ Տիրոյիցիօ—Սերգիեվի վանքում: Հանգուցեալը մի շարք աստուածաբանական գրուածքներ է երկասիրել իւր ձեմարանական գործունէութեան միջոցին: Իսկ եպիսկոպոսանալուց յետոյ հրատարակել է իւր քարոզները:

Բարձրագոյն հրամանով Մոսկուայի միտրոպոլիտ նշանակուած է Արաստանի էկզարխ Ն. Բ. Սրբազնութիւն Ալադիմիր արքեպիսկոպոսը: Իսկ Նորա փոխարէն Արաստանի էկզարխ, ս. Սինոդի անդամակցութեան պատուով՝ Խոլմի և Արաշափայի արքեպիսկոպոս Ն. Բ. Սրբազնութիւն Ֆլափիան:

— Церковный Вѣстникъ № 3 «Հայրենական եկեղեցին անցեալ տարուայ ընթացքում» վերնագրով մի յօդուածից քաղուած ենք հետևեալ տեղեկութիւնները:—Ռուսական թեմելի թիւն է ըն-

դամէնը 65 (մին Ամերիկայում)՝ որ և անցեալ տարի անփոփոխ է մնացել: Կորա փոխարէն արագութեամբ աճում է վանքերի թիւը, որ 760-ի էր հասնում, և աւելացան վրան կրկին 12 վանքեր՝ կրօնաւորների և կոյսերի զոցա հետ մի նոր վանք Կովկասում՝ Կուրանի վիճակում: Այդ վանքերից մի մասը միսսիոնարական նպատակների է ծառայում: աշխատում են օգտակար դարձնել նոցա առհասարակ բարեգործական նպատակների համար: առ այժմ 134 հիւանդանոցներ և 84 անկեղանոցներ կան այդ վանքերին կից, իսկ անցեալ տարի յուլիս 2-ին հրատարակած օրէնքով աւելի որոշուում է նոցա վերայ գրուած պարտաւորութիւնը խնամք տանելու անշափահաս յանցաւորների մասին: Սինոգական դրամների կից և մօից ընդհանուր հաշիւը 1897 թ.-ի համար ներկայացնում է 7.959,017 ռուբլի պատկանելի մի գուժարորից հոգևոր—կրթական հաստատութիւնների համար ծախսուել է 3,150,766 ռ. (28,050 ռ. աւելի 1896 թ նախահաշուից): Իսկ աշակերտակիցների պահպանութեան համար 1.361,981 ռ. (173,656 ռ. աւելի նախընթաց թ.-ի նախահաշուից): Առանձին հոգ է տրուել կառավարութեան կողմից եկեղեցական—ծըրխական դպրոցների պահպանութեան և նոցա գործունէութիւնը ընդարձակելու մասին. այդ նպատակով ի լրացումն ս. Սինոդի կողմից եղած ծախքերի պետութեան կողմից տրուած է մէկ ու կէս միլիոն ռուբլի, այլև 4,800 ռ. յատկապէս Արաստանի էկզարխութեան մէջ ծխական և գրիւ կարգալու դպրոցներ պահպանելու նպատակով: Կազանում (22 յուլիս—6 օգ.) տեղի ունեցած միսսիոնարների ժողովը առանձին նշանակութիւն է տուել ժողովրդական դպրոցների գործունէութեան միս. գործի համար:

— Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում Ռուսաց եկեղեցւոյ օրաուր աճող յառաջընթացութիւնը և եռանդը միսսիոնարական գործում: Թէև ուս եկեղ. շրջաններում գանգատուում են, որ դեռ հարկաւոր չափով միջոցներ գործ չեն գրուում բուն երկրի մէջ սպրոզ այլակրօններին քրիստոնէութիւն քարոզելու և աղանդաւորներին դարձնելու համար: բայց քիչ չէ նաև ոչին, ինչ որ վերջին ժամանակ եղել է: Այլակրօնների լեզուին ու բարբերին ծանօթ միսսիոնարների թիւը գնալով բազմանում է: բազմանում են նաև նոցա լեզուներով տպուած գրքերը, շատ գաւառներում տեղական լեզուով ժամակարգութիւն է լինում և ըն, Աւշադրութեան է առնուել Կարսի բերդի քահանայ Զիպիկի առաջարկութիւնը՝ միսսիոնարական բնիտուրին հաստատել Կարսի նահանգի համար: ուր բազմաթիւ աղանդաւորներ են բնակեցրած: Բեազանի նահանգում հազարաւոր մահմաականներ կան դեռ, սկսուած է արդէն հակամահ-

մետական միասինի կողմակերպութիւն, Տփսիսում հաստատուում է Թմակակն հոգևոր—կրթական կորսու-  
 բուրիսն խօսքի և գրի միջոցաւ աշանդների դէմ մարտաւելու համար:—Յատկապէս Անդրապայտեան  
 երկրի համար մեծ հոգս է պատճառում այնտեղ իշխող  
 Լաւայական կրօնը: որ իւր տաճարների և ձէսերի արտաքին շքովն ու փառահեղութեամբ բու-  
 լորովին նսեմացնում է քրիստոնէական եկեղեցի-  
 ները: Այդ դպան կոչուած տաճարներից մէկն օր-  
 իւր արևելեան ճաշակի համեմատ շքեղ զարդա-  
 րանքներով մէկտեղ կէս միլիոնի արժողութիւն ու-  
 նի: Մինչդեռ անցեալ դարում միայն 150 լամաներ  
 էին հաշուում: այսօր նոցա թիւը 15—18 հազար  
 է: և դոցա դէմ գործում են միայն 18 միասնո-  
 նարներ: Առաջարկուում է՝ ի նկատի ունենալով  
 մանաւանդնոցա ընդհանրական թէ անտեսական տեսա-  
 կէտից: շրջապատողների կեանքի վերայ ունեցած  
 քայքայող ազդեցութիւնը: աւելի եռանդուն մի-  
 ջոցներ ձեռք առնել նոցա գործունէութեան դէմ:

Աւելի աչքի է ընկնում ռուսական միս-  
 սինի յաջող ընթացքը հետու արևելքում: ճա-  
 պոնիայում ձեռք բերած արդիւնքները յայտնի են  
 արդէն: 20,000 ճապոնացիներ այսօր Օրթոդոքս ե-  
 կեղեցուն են պատկանում: և կրկին մի նոր միս-  
 սինար է ուղարկուած այնտեղ՝ նիկոլայ նշանաւոր  
 եպիսկոպոսին աջակցելու համար իւր քարոզչական  
 գործունէութեան մէջ:—Նոր միսսինէ կողմակեր-  
 պուում այժմ Կորէայի համար: դէպի ուր ճանա-  
 պարհ ընկաւ նորերս Ամիրոսի վարդապետը մի  
 քանի օգնականներով: նորա գործունէութիւնը  
 պէտք է սկսուի Սէուլ մայրաքաղաքում եկեղեցի  
 և միսսինարների բնակարան կառուցանելով: Կորէ-  
 այի 13 միլիոն հեթանոս մեծ մասամբ բուզդայա-  
 կան: բնակչներից միայն 30,000 քրիստոնէութիւն  
 են ընդունել լատին միսսինարների միջոցաւ: որոնք  
 ոտք են դրել այդտեղ անցեալ դարի վերջերին:  
 Այնտեղ գործում են այժմ նաև ամերիկական  
 միսսինարներ:—Չինաստանում Ռուսաց առաջին  
 եկեղեցին կառուցուել է ուղիղ 200 տարի սորանից  
 առաջ: և թէպէտ Օրթոդոքս քրիստոնէանների թի-  
 ւը հազարից շատ անց չէ այնտեղ: որոնք սա-  
 կայն 5 եկեղեցիներ ունին: բայց վերջերս Ռուսաս-  
 տանի հետ սկսուած սերտ յարաբերութեան շնոր-  
 հիւ երևի միսսինի համար ևս ընդարձակ ասպար-  
 թեղ կրացուի:—Պակաս աչքի չէ ընկնում Օրթո-  
 դոքս եկեղեցւոյ զօրանալը և ընդարձակուիլը Ամե-  
 րիկայում: երկու տարուց ի վեր հրատարակուում  
 էր արդէն այնտեղ „Православно—Американскій  
 Вѣстникъ“ թերթը: անցեալ տարուայ վերջին  
 սկսեց հրատարակուիլ Свѣтъ անունով մի թերթ  
 աւստրիական մալարոսների լեզուաւ: որոնք մեծ  
 քանակութեամբ Ամերիկայ են գաղթում: և շատերը  
 թողնում են տեղիս (միութիւնը կաթոլիկ եկեղեց-

ւոյ հետ) և Օրթոդոքս եկեղեցւոյ ծոցն են վերա-  
 դառնում: Հարաւային Ամերիկայում Արգինտինայի  
 Բուէնոս—այրէս մայրաքաղաքի մէջ մի նոր տաճար  
 պէտք է կառուցուի: որի համար նորին Պայսերա-  
 կան Յեծութիւնը նուիրել է 5000 բուրլի: Մի քա-  
 նի ամիս առաջ Չիքագոյում օրհնուեցաւ նորակա-  
 ուոյց եպիսկոպոսական մայր եկեղեցին:—Վերջապէս  
 անանկալ կերպով ընդարձակ ասպարեղ է բացու-  
 ւում Ռուսաց եկեղեցւոյ համար պարսկա—տաճ-  
 կական սահմանի երկու կողմն ապրող ասորի—նես-  
 տորական համայնքի մէջ: որի կողմից մի պատգա-  
 մաւորութիւն է հասել Պետերբուրգ: զուլս ունե-  
 նալով Մար—Իոնա արքեպիսկոպոսին՝ յայտնելու  
 համար: որ 60000 նեստորականներ կամենում են  
 Ռուսաց եկեղեցւոյ ծոցը մտնել:

ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻ

Քաղաքակիրթ աշխարհում հրապարակի  
 վերայ առաջնակարգ գեր խաղացող և ապա-  
 դայի համար ունենալիք հետեանքներով ամե-  
 նամեծ ուշադրութեան արժանի երևոյթներից  
 մէկն է անշուշտ Վաթոլիկ եկեղեցւոյ: աւելի  
 ուղիղ՝ պապականութեան վարած գոյութեան  
 կուր: և Անդրալեանական վտանգի էութիւնը: վեր-  
 նագրի ներքոյ մի ընդարձակ յօդուած կայ Christ-  
 liche Welt թերթի մէջ (4, 5 և 6 հ.), ուր աշխա-  
 տած է պարզել ներկայ դարում պապական իշխա-  
 նութեան զօրանալու պատճառները և քաղաքակրթ-  
 թութեան այն նոյն իսկ ճշմարիտ քրիստոնէու-  
 թեան համար այդտեղից յառաջ եկած վտանգները:  
 Առանձին կարևորութիւն է տրուում այս նկատ-  
 մամբ Յիսուսեան կարգից ելած Պոմս Հէօնսթրէօթի  
 կարծիքներին: Վերջինս կամենում է ապացուցա-  
 նել: որ անդրալեանականութիւն և կարոլիկ իրսնոնու-  
 րիսն տարբեր բաներ են: անդրալեանականութիւնը  
 իւր տեսակի քաղաքական մի կազմակերպութիւն  
 է: որ կրօնական քօղի ներքոյ աշխարհային իշխա-  
 նութեան է ձգտում: ձգտում է կաթոլիկութեան  
 կրօնական պետի: պապի՝ համար քաղաքական աշ-  
 խարհում արքայից արքայի դիրք ձեռք բերել:  
 Այս պատճառաւ պապականութեան դէմ կուռելու  
 զիջաւոր միջոց նա համարում է այն: որ եւրոպա-  
 կան պետութիւնները չվերաբերուին դէպի պապը  
 իրրև մի քաղաքական միապետ: քաղաքական ներ-  
 կայացուցիչներ չպահեն նորա մօտ: չճանաչեն նօ-  
 րա տուած շքանշանները: պատուոյ տիտղոսները:  
 պաշտօնական զգեստները և ըն: վարուին մի խօսքով  
 իրրև մի զուտ կրօնական պետի հետ և միայն այդ  
 տեսակէտից ամեն յարգանք ցոյց տան նորան:—  
 Թէ որչափ դժուար իրագործելի են այսպիսի ծրա-  
 գիրներ: յայտնի է նորանից: որ Բիսմարկի նման  
 երկաթէ մարդը և ամենակարող քաղաքագէտը

ձկուեցաւ նոցա առաջ: Պապականութեան իսկական ղոյժը ո՛չ թէ Աատիկանում և նորա շուրջ կազմակերպուած ճարտար քաղաքականութեան կամ այդ քաղաքականութիւնը գործադրող կրօնաւորներէ բանակի մէջ է, այլ այն միլիոնաւոր ջերմեանդ ժողովրդի մէջ, որ անպայման հնազանդութեամբ խոնարհում է պապական աթոռի առաջ: Այն օրուանից, երբ պապի անսխալականութիւնը հրատարակուած է, կաթոլիկի համար ճշմարտութիւնն այն է՝ ճշմարիտ կրօն այն է, ինչ որ պապը քարոզում է. ս. Գիրքը, եկեղեցւոյ պատմութիւնը, հայրերի գրուածքներ իրաւունք չունին նա այլապէս մեկնելու, քան ինչպէս մեկնուում և նախագծուում է պապական աթոռի բարձունքից: Բնական է ուրեմն, որ երբ նոյն տեղից յայտարարուում է, թէ պապը պէտք է տէր և իշխան լինի բոլոր երկրի վերայ, բոլորին օրէնք տայ, թագաւորներին և իշխանաւորներին հրամայէ, գիտութիւն և կրթութիւն իւր ցանկացած սահմանների մէջ դնէ՝ միլիոնաւոր ամբողջ իրրև պատգամ կընդունէ այդ սկզբունքները, իրրև կրօնական հաւատալիք, և ամեն եռանդ գործ կընէ նոցա իրականացման նպաստելու համար:

Թէ ինչպէս յիրաւի հասարակ ամբողջ կրօնական ջերմեանդութեամբ է վերաբերուում դէպի պապական աթոռը, պապի անձնաւորութեան մէջ կարելի է ասել աստուածային զօրութիւն մարմնացած տեսնում, ուստի և կուզքի պէս պաշտում նորան՝ երևեց կրկին վերջին յորեւեանների (60-ամեայ քահանայութեան և 20-ամեայ պապութեան) առթիւ կատարուած հանդէսներին: Փետր. 13-ին պապը հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէր ս. Ատորոսի մայր տաճարում. իտալիայի զանազան կողմերից 20,000 ուխտաւոր էր ժողովուել այդ պատարագին ներկայ լինելու համար. եկեղեցի մտնել ցանկացողների բազմութիւնն այնչափ մեծ էր, որ բոլորին ներս թողնել կարելի չէր ի հարկ է. միայն 60,000 հոգի տոմսակ ունեցողներին էին ներս թողնում. իսկ հսկայական տաճարը այդպիսի բազմութեան համար ամենին նեղուածք չի լինում: Երբ պապը սպիտակ, փառահեղ հանգերձներէ մէջ պատգարակով եկեղեցի բերուեցաւ. մանաւանդ երբ պատարագը վերջացնելուց յետոյ դուրս տարուեցաւ՝ ամբողջ ոգևորութեան այլևս չափ ու սահման չկալ:

Հասարակ ամբողջ հաւատացած է, որ «Աատիկանի բանտարկեալը» աստուածային փառքի արժանի լինելով հանդերձ, չոր յարդի վերայ է քնում: Բայց ոչ միայն հասարակ ժողովրդի, այլ նաև միջին ու բարձր դասակարգերի մէջ նման հաւատ և համապատասխան համոզումներ սնուցանելու համար անթիւ գործակալներ ունի Հոռոմը: Գերմանիայի Մայնց քաղաքում վերջերս տեղի

ունեցած մի ժողովի մէջ օր. Բրենտանօ անունով մի աղնուական յայտնի իրաւաբան հանդիսաւոր ճառ խօսեց, որի նպատակն էր սպացուցանել, թէ տիեզերական պատմութիւնը պապականութեան պատմութիւն է, թէ եւրոպական բոլոր ազգերը Հոռոմից են լոյս ստացել, թէ նաև այժմ բոլոր քաղաքակրթութեան կենդրոն և յենարան Հոռոմն է:

Հոռոմի գործակալների մէջ առաջին տեղը բռնում են հարկաւ և նորա քաղաքականութիւնը ղեկավարում Յիսուսեան կարգի կրօնաւորները, որոնց թիւն այսօր 14,250-ի է հասնում: դոցանից 6,000 հ. հայեր, 4,415 գրողաստիկոսներ և 3,835 աշխարհական անդամներ են: Ամբողջ աշխարհը նոքա բաժանել են 22 դաւաանների. ամենից շատ գործողներ (թէև դաղտնի) ունեցող դաւաող Գերմանիան է, որովհետև մրցումն այդտեղ ամենից սաստիկն է. մինչդեռ օր. Մերսիկայում, ուր ամենաջերմեանդ կաթոլիկութիւն է իշխում, նոցա թիւը շատ քիչ է. Թէ ինչպէս գիտեն նոքա աշխարհի մէջ իշխող բոլոր զօրութիւնները իրենց նպատակներին ծառայեցնել, բաւական կլինի գործ դրած միջոցներից մէկը միայն յիշել՝ շատերը յայտնի են, ներկայումս Իտալիայի մի ծայրից մինչև միւս ծայր ամեն տեղ Յիսուսեան կարգի խնայողական արկղներ կան, որոնք գրեթէ տէրութեան վճարած տոկոսի կրկնապատիկն են վճարում. ինչ կարծիք, որ այդպիսով նա ահագին քանակութեամբ իրենից կախումն ունեցող պարտապաններ և պարտատէրներ է ձեռք բերել և հետզհետէ յառաջ գնալով՝ կարող կլինի մի օր երկրի ֆինանսական գրութեան վերայ իշխել. իսկ մեր օրերում ֆինանսների վերայ իշխել—երկրի վերայ իշխել է նշանակում՝ մանաւանդ Իտալիոյ պէս մի սնանկ երկրի մէջ:

Եւրոպական պետութիւնները ոչ միայն տրամադրութիւն չեն ցոյց տալիս լուրջ ուշադրութեան աննելու պապականութեան այս օր աւուր զօրացող իշխանասիրական քաղաքականութիւնը, այլ քիչ հակառակն աշխատում են ամեն կերպ յարմարուիլ նորան՝ պապական զօրութիւնը կողմնակի նպատակների համար գործ գնելու գիտաւորութեամբ: Այդպէս վարուեցաւ օր. Գերմանիան վերջին ժամանակ Ապսեր ծննդեան տարեդարձի առթիւ տեղի ունեցած մի ցոյցի նկատմամբ, որ մեծ յուզումն յառաջ բերեց բողոքականների մէջ, Հոռոմում անդրաւերանական գերմանացիները հրաժարուեցան մանակցել Գերմ. գաղութի ի պատիւ Ապսեր կազմած հանդիսաւոր հացկերդիին, որովհետև այնտեղ ճառեր պէտք է խօսէին և Ապսեր հետ պէտք է խմուէր նորա դաշնակից, բայց պապի թշնամի համարուող, Իտալիոյ Հումբերտ թագաւորի կենացը, նոքա առանձին ճաշկերդի լի կազմեցին, որին նախագահում էր Ապսեր ներկայացուցիչը Աատիկանում (Բիւլով

— դաւանութեամբ բողոքական) և խմբց պապի ու Առայսեր կենացը միատեղ՝ մինչև իսկ պապի անունը առաջ յիշելով և թագաւորի անունը զանցառութեան տալով։ Նորա ներկայութեամբ ճաշի միջոցին երգուեցաւ նաև պապին նուիրած մի բողոքովին հակաբողոքական երգ։ Այդ բանի համար Անեսարամական միութեան (Evangelischer Bund) կենդանական գիււանը մի բողոք ուղղեց պէս. կանցիտիկն և յանդիմանական պատասխան ստացաւ. որի մէջ ասած էր. թէ Վատիկանի ներկայացուցչի վարմունքն օրինաւոր է ըստ ամենայնի և թէ Առայսրը իւր զժգոհութիւնն է յայտնում բողոքողներին։— Աթոլիկները յոյս ունին որ Վիլհէլմ կայսրը իւր առաջիկայ աշնան դէպի Երուսաղէմ կատարելիք ճանապարհորդութեան միջոցին, տաճկաց սուլթանի հետ ունեցած բարեկամութեան շնորհիւ՝ կհարողանայ տաճիկներին առնել այն տունը, որ Քրիստոսի վերջին ընթրեաց վերնատունն է համարուում, և իրենց վերադարձնել՝ մի մեծ շնորհ արած լինելով այդպէս պապին։ Սակայն քանի որ նոյն այդ տունը տաճիկների համար սրբութիւն է իբրև Պաւլոս մարգարէի գերեզմանի տեղ՝ բնական է որ կայսեր բարեկամութեամբ ետ առնել այն նոյնչափ հեշտ է, որչափ հեշտ կլինէր հրէաների փողով տաճարի տեղը գնել։

Պակաս զօրեղ չէ պապական ազդեցութիւնը փրանսիական քաղաքականութեան վերայ, մանաւանդ զօրքի մէջ, Վերջերս այնչափ մեծ ազմունկի պատճառ եղող Պրէյքնուսի դատի առթիւ այդ ազդեցութիւնը ակնյայտնի կերպով երևաց, և նորա դէմ շատ բողոքողներ եղան։ Բոյց աւելի զօրեղ է և օտարադաւանների համար փտանգաւոր պապը Աւրստրիայում. մօտ օրերս Հռոմում բացուել է մի նոր ուսումական կոլլեգիս՝ Աւստրիայի հզատաբէր կաթոլիկ եկեղեցւոյ հետ միացած, ուսմէնների կամ փոքր ուսանների համար հոգիւններ պատրաստելու նպատակաւ, Աոլլեգիայի վարիչները Յիսուսեաններն են հարկաւ։



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ԽՕՍԲ

ՄԵՐ ԵՐԿՈՒ ԳՐԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻ

ՄԵՐ ԸՅՅՄԵՆ ՄԵՍԻՆ.

Յոյս ունինք «Արարտ» ի ընթերցողները շահագրգռութեամբ կարդացին պ. Արեղեանի

լուրջ յօդուածը սոյն նիւթի մասին։ Խնդիրը ինչպէս որ նա հաւանեցուցիչ պատճառարանութեամբ լուսարանեց, կենսական է, մեր բարձր հոգևոր զարգացման խնդիր է, ուստի և կարօտ է բազմակողմանի քննութեան, որպէս զի այդ մասին բարի ցանկութիւնները լոկ ցանկութիւն չմնան, այլ միահամուռ դործակցելու խթան և սատարիչ դառնան, և այնու կարևոր դործի բարգաւաճութիւնն ու յաջողութիւնը ըստ արժանւոյն իրականանայ։

Այս խնդիրը հարկաւ տակաւին շատ ջուր կը վերցնէ, շատ թեր ու դէմ կործիքներ կը յարուցանէ, մանաւանդ որ մի կողմից արդէն լավում է, թէ անկարելի է բնութեան հոսանքի հակառակ ընթանալ, իսկ միւս կողմից՝ թէ՛ կուրու թիւն է բնութեան հոսանքը չը տեսնել և չճանաչել, որպէս զի ըստ այնմ ընթանանք։ Այս հակառակ առարկութիւնների մէջ ինքնին երևում է միացման հանգոյցը, որով խնդրի լուծումը աւելի պարզուած պիտի համարենք։ Առաջիկայ տողերով մենք պետք է փորձենք ցոյց տալ թէ պ. Արեղեանի քննադատութիւնը շատ ու քիչ թիւ բիմացութիւնների տեղիք է տալիս և որչափ որ նորա առաջ բերած սկզբունքներն ու հիմունքները անտարակոյս բանաւոր են, նոցանից դուրս բերած եզրակացութիւնները ընդունելի չեն կարող լինել։

Պ. Արեղեանը քննելով՝ արեւմտեան զրական լիզուին յատուկ եղած, մի քանի քերականական հանդամանքների պարմանական յեղաշրջութիւնները, յայտնի է կացուցանում որ այն ամէնը միշտ մի որոշ ուղղութեամբ է ընթացել, այսինքն՝ նպատակ է արեւելեան լիզուի մերձեցման (իւր քննութեանց լուսազոյն մասը այս կէտը պիտի համարուի), բոյց յետոյ եզրակացում է, թէ այսուհետև ըողոր զիջումները արեւմտեան ըստարտից պէտք է պահանջուին, իսկ արեւելեանը հանդիստ հոգով կարող է ոչ մի նշանախնցից չհրաժարուիլ, ուրիշ խօսքով՝ այս տեղ իսպառ արհամարհուած է իրաւաստութեան „do ut des“ առածը (տալիս եմ, որպէս զի փոխարինես)։

Հերիք չէ ասել, թէ այս դատավճիռը փափուկ և մեղմ չէ, այլ միանգամայն ան-